

ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
 Տարեկան 12 Ժր.
 Վեցամսեայ 6 »
 Արասահմանի հա-
 մար Տարեկան 15 »
 Վեցամսեայ 8 »
 Ամերիկացի համար
 Տարեկան 3 Ժր.
 Վեցամսեայ 1.50 »
 ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Մասնագրան սոյր առաջին
 երեսին համար 40 սանթիմ
 է. իսկ վերջին երեսի հա-
 մար 20 սանթիմ է. երեքին
 անի սնկամներու համար
 20 Օլոյ զեղը կըլլայ:

Պուշկարիոյ համար ձեռքի
 (15 ՍԱՆԹԻՄ)
 Վառնայի համար ձեռքի 10 սանթիմ

ՇՆԱՐԱԹ

R. P. Kalémecarian
 (Autriche)
 Mechitharistangasse W. 4
 Vienne

Դրամ դրկի
 մեկ հասցիին
 Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲԱՆԱԲԱՆԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇՆԱԲԻ ԵՒ ՇՆԱՐԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Никола Бакърджиевъ

Վրոպիակի և յն սրուի
 Արասահմանի համար ձեռքի
 (20 ՍԱՆԹԻՄ)

ՅԱՅՅԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ՇԱՐԺՈՒՄ»-Ի ՕԺԱՆԴԱԿ

Մ Ա Ս Ն Ա Խ Մ Բ Ի Ն

Հայ թերթերուն ամենուրեք, մա-
 նաւանդ արտասահմանի մէջ, ունե-
 ցած խարխուռ ու անապահով վիճակը
 ամենուն յայտնի է: Նոյնիսկ ամե-
 նէն գաղափարական և հասարակա-
 կան կեանքի մէջ նոր հոսանք մը
 մայնելու կոչուած թերթերը, ինչպէս
 երբեմն Մշակը, երկար տարիներ ան-
 ապահով վիճակ մը ունեցած են, ու-
 թովհետեւ մեր հասարակութիւնը
 դեռ այնքան վարժ չէ իր թերթե-
 րուն պէտք եղած քաջալիրութիւնը
 մատուցանելու:

Սոյն վիճակին ենթարկուած էր
 նաեւ Շարժում թերթը, որուն ար-
 դիւնակ գործը յարատեւութեամբ
 շարունակելու միջոցներ ընծայելու,
 և թերթը նրա թափափու հաստատ ու
 ապահով դիրքի մը հասցնելու հա-
 մար, ներկայիս կուգանք յայտարար-
 ել թէ, խմբագրութեան օժանդակ
 մասնախումբ մը կազմուած է Վառ-
 նայի մէջ:

Մասնախումբս Շարժումը իրբե-
 անկախ թերթ ճանչցած և միանգա-
 մայն վստահ ըլլալով թէ Շարժումի
 խմբագիրը մեր աջակցութիւնն օգ-
 տուելով, ամէն ճիշդ պիտի թափե-
 թերթը միշտ իր ծրագրին և ուղ-
 դութեան հաւատարիմ պահելու, հրա-
 կեր կը կարգայ Շարժումի բոլոր ըն-
 թերթողներուն նոյնօրինակ օժանդակ
 մասնախումբեր կազմակերպել իրենց
 յղանակներուն մէջ, և իրենց ջան-
 քերը միացնելով մասնախումբս ուժ
 տալ անոր Շարժումը նրա թափափու ա-
 մուր հիմերու վրայ գնելու համար:

Ի դիմաց Շարժումի օժանդակ
 Մասնախումբին

Դր. Ալեքսանտր Արարիկեանց
 Սարգիս Գաբրիելեան
 Արսէն Էսաբաշեան

ԵԶԱԿԻ ԵՐԵՒՈՅՐ

Մեր ժողովրդի այս դժբախտ
 տարիների մէջ անձուէր, իրենց
 քաղաքացիական պարտականու-
 թիւնները ճանաչող հոգեւորա-
 կաններ այնքա՛ն քիչ են եղել,
 որ այդպիսի մի անհատ երեւան
 եկած գէպը միայն փթած ու
 նեխված ասորի մէջ՝ ակամայից
 պարտաւորվում ենք ուշադրու-
 թիւն դարձնել և զբաղվել այդ
 անհատով:

Իօսքս Մշի առաջնորդի մա-
 սին է՝ Այդ առաջնորդը, Բար-
 կէն վարդապետը, հիմա ձերբա-
 կալված է թուրք կառավարու-
 թեան ձեռքով: Իհարկէ զար-
 մանալին այն չէ որ թուրքը մի
 վարդապետ է ձերբակալել, այլ
 այն որ այդ երիտասարդ կրօնա-
 ւորը ձերբակալվել է իր հովու
 ժողովրդի կրած տառապանք-
 ների գէժ բողոքելու պատճառով:

Հայի տառապանքները շատ
 շատ են ու երկարատեւ. և տա-
 ռապալից դարերի ընթացքում
 նրա կրօնաւորները լուռ հանդի-
 սատես են եղել այդ տառապանք-
 ներին: Հայրենասէր, ժողովրդա-
 սէր, անձնազոհ հովիւները բա-
 ցառութիւն են կազմել և դեռ
 կազմում են ներկայ ամենաան-
 տանելի ժամանակներում: Ու,
 Բարկէնը, եթէ ճիշդ է որ ձերբա-
 կալվել է բողոքելու պատճառով,
 այսօր մտնում է այդ բացառու-
 թիւնների շարքի մէջ:

Մեր կրօնաւոր դասակարգը
 մենք ընդունում ենք իբր հայ
 ժողովրդային մարմնի մի քարա-
 ցած, մեռած մասը, որը իր քա-
 րացումը տարածում է և ամբողջ
 ժողովրդական մարմնի մէջ. երբ
 այդ մասի մէջ յանկարծ կեն-
 դանի արեան հոսանք ենք նկա-
 տում, ուրախանում ենք հաւա-
 տալով թէ՛ նոյնիսկ այդ քարա-
 ցած մասը դեռ բոլորովին մեռած
 չէ և չէ կարող այնչափ էլ վնա-
 սել ժողովրդին...

Բարկէնները, Իզմիրլեանները
 մեր քարացած, մեռած հոգե-
 ւորականութեան յանկարծակի
 կեանքի նշույլ ցոյց տուող արեան

հոսանքները են. ուստի մեզ համար
 շատ յարգելի են. որովհետեւ
 մեռած զանգամի մէջ են շար-
 ժվում... բայց թէ այդպիսի-
 ները պէտք է կարողանան ամ-
 բողջ մեռած զանգամը կենդա-
 նացնել, դրա մէջ շատ կասկա-
 ծում ենք:

Թող չը կենդանացնեն, հոգ չէ.
 բայց պոնէ իրենք իբր հայ քաղա-
 քացիներ կարող են մեծ և զգալի
 օգուտներ բերել մեր տարաբախտ
 ժողովրդի, միանալով մեր ժո-
 ղովրդին կենդանի և բողոքող
 ասորի հետ: Ընդդէմ ճաճկաստա-
 նի նման մի երկրում բողոքողի
 դեր ստանձնելը մեծ զոհողու-
 թիւն է պահանջում, բայց ո՞վ
 չը գիտէ. թէ մեր հայրենիքի
 և ժողովրդի բարօրութիւնը միշտ
 և միշտ զոհողութիւն են պա-
 հանջում. զոհողութիւն անհա-
 տական, զոհողութիւն դասա-
 կարգային, զոհողութիւն ազգա-
 յին, և այդ զոհողութիւնների
 շարքի մէջ հոգեւորական դասն
 էլ թող մի նմուշ ունենայ: Բար-
 կէնները այդ նմուշները են:

Բայց աչքի զարկող, ուշադ-
 րութիւն գրաւող նմուշները. ու-
 թովհետեւ այդ համակրելի նմուշ-
 ները են որ դեռ եւս կարողա-
 նում են մեր հոգեւորական ան-
 զգայ դասակարգը մի փոքր տա-
 նելի դարձնել:

Բարկէնի միւս յատկութիւն-
 ները մեզ յայտնի չեն. մենք
 նրա առաջնորդութիւնից յիշում
 ենք միայն և մի ուրիշ ուշա-
 դրութեան արժանի դէպք. Մշի
 անամուսին մնացած կանանց
 խնդիրը: Գուցէ նրա առաջար-
 կած ձեւը այդ ցաւին դարձան
 տանելու համար անյարմար և
 անօգտակար էր. բայց և այնպէս
 նա այդ հարցը որոշ կերպով
 բարձրացնելով մի շատ լուրջ
 խնդիր շօշափեց — Հայաստա-
 նի դատարկվելու խնդիրը: Այդ
 հարցը բարձրացնելով նա ցոյց
 տեց թէ՛ ժողովուրդի անհե-
 տացման առաջը առնելու համար
 կարելի է շատ դիւրութեամբ
 եկեղեցական օրէնքները մեղ-
 մացնել և անպէտք ու վնասակար
 աւանդութիւններ ոտքի տակ

տալ: Այդ հարցը շօշափելով
 Բարկէնը փաստ տեց թէ ինքը
 իբր հայ քաղաքացի ըմբռնում
 է ժողովրդի ցաւերը և ընդու-
 նակ է ըմբռնել գոնէ այս ցա-
 ւերի մի մասի հիմնական պատ-
 ճառները: Ահա այդ և այսօրայ
 ձերբակալումն է որ մեզ դրդե-
 ցին այս տողերը գրել Բարկէն
 վարդապետի մասին:

ՎԱՐՇՈ

ՀԱՅԱՏԵԱՅ ՄԱՍՈՒԼԸ

«Արմէնի» այս վերնագրով
 յօդուած մը ունի ի պատասխան
 «Լա Ռիւ տ'Օրիան»ի Պօլսոյ
 թղթակցի հերքողական յօդուա-
 ծին, որով ան հակառակորդ կը
 հանդիսանայ վերջերս Բարիզի
 մէջ տեղի ունեցած «Մարդասի-
 րական Համաժողովին» մէջ
 ի նպատակ հայերուն արուած որս-
 շումներուն:

Յօդուածագիրը կը հերքէ Առա-
 քելեանի յիշատակագրին մէջ
 յիշուած Սպաղանքի կոտորածի
 գէպքը, և հայ մանուկի մը նիղա-
 կին ծայրը անցնուիլը, ու այդ
 բոլոր տեղեկութիւնները խեղա-
 թիւրուած կը յայտարարէ:

Եւ յետոյ կաւելցնէ. ճշմարտու-
 թիւնը այն է որ Փոքր Ասիոյ մէջ
 խաղաղութիւնը կը տիրապետէ.
 մահմետական և քրիստոնեայ,
 ամէնքն ալ զբաղուած են իրենց
 գործերով աւանց հոգ ընելու թէ՛
 իրենց մասին աշխարհը նպատա-
 կաւոր զրոյցներ կը հնարէ:

Վստահութիւնը և խաղաղու-
 թիւնը վերահաստատուած է ա-
 մէն տեղ: Եւ այս տեսակէտով
 շատ ցաւալի է որ Առաքելեան
 և իր նման առաջնորդները կու-
 րանան այդ ամէնը և կը ջանան
 խորտակել այս բարեբար ար-
 դիւնքները գերազանց սուտեր
 ստեղծելով:

Եւրոպական մամուլի մեծամաս-
 նութեան հայեատեսաց ըլլալը նոր
 բան չէ:
 Սուլթանը բաւական դրամունի

եւրոպական մեծ մասամբ կաշառուող և վաճառականական սկզբունքներով զեկավարուող հրապարակագիրները կաշառուելու :

Այդ կաշառակեր մամուլը այնքան ստոր գտնուեցաւ որ, դեռ հայկական կոտորածներու մամուլնակ, երբ հայու արիւնը գետնորով կը հասէր իր պայտնական հողին վրայ, ուղից յիշել այդ քստմնելի եղեռնագործութիւնները և Սուլթան Համար պաշտպանել :

Աւայսօր պարմանալու ոչ մէկ շան կայ, երբ թղթակից մը կը կոչուի ու գէժ կը խօսի ինչպատ հայոց տրուած որոշումներուն : Այժմ որոշումները կը վաւերացնեն Սուլթանի և իր պաշտօնէից բրած հրէշտանի ստորագործութիւնները հայերու վերաբերեալ : Աստի և պէտք է այդ վաւերացումին հիմարը խորտակել : Այս քէ Ծածկատանը գրաստանը ներկայացնել, ուր մարդերը հրէշտակներու պէտ կապրին, իսկ թուրք պաշտօնեաները հրէշտակապետ պահապաններ են :

Չարմանալի չէ նոյնպէս որ հայաստեաց մամուլը գոյութիւն ունի. այդ մամուլը այժմ գոյցէ աւելի զօրեղանայ, քանի որ հիմա «Բրօ Արմէնիա» ծնեցաւ. Սուլթանը հանգիստ չի կրնար ըլլալ, ան գիտէ որ հայերուն վիճակը շարունակ անտանելի է, և «Բրօ Արմէնիա» անտանելի պիտի գտնայ իր ձեռք առած գատը պաշտպանելու համար :

Մենք կը հաւատանք թէ Սուլթանը վաղը հակառակ «Բրօ Արմէնիայի», բազմաթիւ եւրոպական թերթեր պիտի կաշառէ, կամ թէ նոր օրկան մը պիտի ստեղծէ ինքզինքը պաշտպանելու և «Բրօ Արմէնիայի» հրապարակած տեղեկութիւնները հերքելու համար :

Մեր կարծիքով ոչ չափէն աւելի ոգեւորուելու է օտար հայասէր թերթերով, ոչ ալ վախճալու է հայաստեաց թերթերէն :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՑԱԽԱԿՑՈՒՄ ԵՆ

Անշուշտ «ցաւում ենք» խօսքը շատ են լսել մարդիկ թէ անհաստական և թէ հաստակական վշտերի ժամանակ և Բայց այդ խօսքը, վշտահար անհատի և ժողովրդի դիմաց, զերօյն նշանակութիւն ունի, շատ անգամ էլ ծաղրէ տեղ կտրելի է ընդունել Յաւում ենք խօսքը մեծ մասամբ արտասանում են զիպլոմատները թէ անհաստական և թէ քաղաքական կեանքի մէջ, և այլ խօսքերի սակ թագնովուէ սառն. լիբը անտարբերութիւնը զէպի արտոյայտված վիշտը և զգործառութիւնը . . . Բայց վիշտը և զգործառութիւնը աւելի

Ներկայիս հասարակական կարծիքը շատ քիչ կրնայ ազդել քաղաքական խնդիրներու լուծումին վրայ. օրինակներ շատ ունինք և թուելը աւելորդ կը համարենք : Ամենէն կարևորը սեպական ուժն է, այդ զօրացնենք :

ԿԼԱՒՏԻԱ ԵՒ ՊԻՂԱՏՈՍ (ԱՒԱՆԻՈՒԹԻՒՆ)

Կլատիան միշտ Պիղատոս անգուստ սիրով մը կը սիրէր, հակառակ այն տուգանքներուն, որոնց ենթարկուած էր Պիղատոս Մեծ Նազովրեցիին շարժարժան առան :

Այս թերեւս ալ աւելի կը սիրէր զայն, այն օրէն ի վեր երբ իր խղճը կը շարժուէր ու կը թուշուարէր իր կեանքը :

Ինչո՞ւ Պիղատոս զինքը մտիկ չէր ըրած, երբ զժողով երազէ մը արթննալով կանչուի առաւ զայն և պաշտօնեցաւ չը պատասխանէր նազովրեցիին : Անոր պատմեց իր երազը ստեղծումը ու անձկութեամբ լիցուի, ու ան ճշմարտութեան շնչով և սիրեցեալ էակին հրապոյրով վառուած խօսակցութեամբ չի յանձնել, եթէ Տիրերիտ կայսեր զէժ նախաինք ըրած ըլլալու յանցանքը չուենայ :

Բայց կայսերն հոն էր և կը հսկէր իր որսը՝ սոված վագրի մը նման. հէք կրնէր իզուր մինչև վերջին վայրկեանը փորձեց մաքառել անոր զէժ. պաշտօնի պատշգամբ բարձրացած՝ կը սպասէր թշնամի ամբողջ որ կը վարէր մեծ նահասակը իր դատարանին առջև. երբ հեռուէն զայն նկատեց, մարդ զրկեց ամուսնոյն յիշեցնելու համար անտուն առած խօստու՛մը :

Յիսուսին և օրը զիմագծերը զայն խորապէս յօգած էին. կիրեակաշար այն ստատպանքները որոնց ենթարկուած էր այս մայրը իր սիրելի զակին ուղղուած նախաինքները լսելով, ու իր վե՛. գործարար հոգին անհուն գթութեամբ մը լցուած էր :

Թափօրը հասաւ. Պիղատոս փորձեց լռեցնել արեան ծարաւի խուժանը. բայց չի յաջողեցաւ. բոլորն ալ, քահանայապետներու թելագրութեամբ, երգուած էին կորստեան մտանել յայն, որ իրենց երեսին կուտար իրենց ոճիրները. ապահովուելու, ի-

նախապատում են այն ժամանակ, երբ ցաւում ենք խօսքը զիպլոմատը ուղղում է զգործառ ժողովրդին :

Թրանսպալի զգործառ Գրեկէրը, արտասանեց անքերում խօսելով Ֆրանսայի նախագահ Լուպի հետ իր հայրենիքի զգործառութեան մասին, վերջինս խեղճ ձերբանուէն պատասխանում է—չ. տ ցաւում եմ, պօքրների քաջութիւնը անօրինակելի է, եթէ յաջողութիւն էլ չունենաք, ձեր միջիթարութիւնը կը գտնէք ամբողջ լուսաւոր մարդկութեան համակրանքի և զարմանքի մէջ :

Այդ միջնորդն է թէ սոված և հաց խնդրող մարդին առեւ—ցաւում եմ որ անօթի ևս, ևս հաց չեմ տայ քեզ, սակայն դու կը միջիթարվես նրանով որ մարդիկ կը զարմանան որ շատ անօթի ևս և զիմանում ես . . .

րենց պրանքը, ու անոնց անդադար կը քարոզէր նախաինքներու մոտացում. գթութիւնը և զգաւտութիւնը. առաքինութիւններ, զորս ինքն իսկ կը գործադրէր :

Սակայն կառավարիչը ամբարտանաւը հարցաքննելէ առաջ, վարանենցաւ : Որքան անոր խօսիլը կը լսէր այնքան վստի կը գտնէր անոր վարդապետութիւնը ու խօսքերը :

Պիղատոս չէր մոռցած կլատիաներազը, ու վախնալով որ ամբողջովին կիրազգործուի. նախ փորձեց փրկել Յիսուսը և հրախրեց անոր հրաշքներուն բոլոր վիճակները, անոր ինչպատ բարեխօսելու : Ափսո՛ս, այս վիճակութիւնները աւելի եւս ծանրացուցին ամբաստանութիւնները, դեռհիկ կախարդ մը ներկայացնելով զայն : Այն առան, անմեղին ստոյգ գատապարտութիւնը կանխատեսելով, Պիղատոս չուզեց այդպիսի ոճիրի մը պատասխանատուութիւնը իր վրայ առնել, և հարցոյց Յիսուսի իր ուր տեղացի ըլլալու և երբ իմացաւ թէ Գալիլիացի է, իսկոյն Հերոյդէսի մօտ ուղարկեց, Բայց չուտ զայն ետ զրկեցին. ու տարաբողջ կլատիան որ զինքը շնորհատուրելու եկած էր, զարձեայ ամենարեւուն մտտանջութեան մտանուցեալ :

Պիղատոս, ամբողջ գոհացնելու համար, Նազովրեցիին խորագանելու գատապարտեց. բայց այս տեսարանը անբաւական էր այդ ողորմելիներուն զգացումները գոհացնելու, ու ամէն կողմէ մահուան ազատակներ որոտալ սկսան :

Կայսերն կը հրճուէր իր յայթախալով ու կը յուսար իսկոյն իր առաջնութիւնը յազեցնել. բայց անակնկալ մտատանջութիւն մը զայն խողովեց, որովհետեւ Պիղատոսի աչքերուն մէջ նշմարեց գութը որ կը նշուէր : Անոր մտեհալու առիթ մը գտնելով՝ անոր ականջէն վար փրսփաց հետեւեալ սպանալիքը. «Եթէ այս մարդը ազատել յանցանքիս, գիտցիր որ կորսուած ես, որովհետեւ կայսեր թշնամի պիտի նկատուիս. այս մարդը չէր ըտող թէ՛ ես թագաւոր եմ» . . .

Այս սպանալիքը կառավարիչին վրայ ակնկալուած ազդեցութիւնը ունեցաւ, բայց սուկայի տեսարան մը պատկերացաւ աչքերուն առջև, յիշեց կլատիան և որոշեց անձամբ չի պատժել ու ամբողջին թողուլ պատժի որոշումը. սակայն վերջին անգամ մըն ալ փորձեց Գալիլիացիին ազատել Պաւսէթի տօնին առթիւ. բայց խուժանը պահանջեց Բարաբաի

Խեղճ Քրիստիէր. ոչ խեղճ պօքրներու Քրիստիէրը խեղճ չէ. նա հարուստ է. նա ձեր է և վաղը կը մեռնի, իսկ նրա թոռները հայրենիքից դուրս էլ իրենց պապի թողած հարստութիւնով կարող են փառաւոր ապրիլ . . . քար ու քանդ են կողմ ձեր տները—ձեր հայրենիքը : Միջիթարվեցէք և քաջ լիբվեցէք :

Գրանից էլ մեծ երջանկութիւն. Լուպին ձեզ ցաւ կցում է նրա ժողովուրդը ձեզնով ոգևորվում, իսկ ազգային ժողովը միամտա՛յն ձեր յախագահն իր համակրանքը յայտնում :

Թուրքը կոտորում է հայերին, մակեդոնացիներին, հրեանում աւերում է երկիրը ու լուսաւոր մարդկութիւնը կրկնում է «ցաւում ենք» . . . և այդ լուսաւոր մարդկութեան ներկա-

ազատուիլը իսկ Յիսուսի խաչուիլը : Պիղատոս յուսաբեկ, պղնձեայ կոնք մը բերել տալով, ձեռքերը լուսայ յայտարարելով թէ՛ ինք մեղաւորից չէ Մեծ Նազովրեցիին մահուան :

Երբ կուզէր արձակել իրեն սպասարկող ծառան, յանկարծ ջրի մէջ նկատեց ոսկի մատանի մը և հարցոյց թէ ո՞ւր կից է. «Աղբիւ կլատիան գայն հոն գրաւ և հրամայեց չի դպչիլ անոր», պատասխանեց ծառան : Պիղատոս խոնարհեց զուրբ և արտասուքի երկու խոշոր կաթիլներ այտերէն վար հոսեցան. առաջին արցունք զղջման և խղճահարութեան որուն պիտի հետեւէին տակաւին շատ աւելի գտն արցունքներ :

Նազովրեցիին գատապարտութեան վերջը, Պիղատոս չը համարձակեցաւ տեսնել կլատիան, վախնալով անոր արդար յանցիմանութիւններէն. որոնց պիտի արժանանար իր ցոյց ստուած թուրքեան համար. որովհետեւ լաւ կը ճանչնար իր արխատիւր կէնք որ կրնար զինքը մինչև իսկ Տիրերիտի առջև վարկարեկ ընել, արդար գործ մը կատարած ըլլալու համար, ուստի փակուեցաւ իր անհասկանալի մէջ և անձնատուր կղաւ իր խորհրդածութեանը :

Կը զգար թէ իրաջնութեան գատապարտուած մարդը արդար մըն էր : Այն առան իր սիրան ու հոգին խղճի խայթէ սկսաւ տառապիլ, ու մտադրեց իսկոյն հեռանալ այս սրբապիղծ և շարաշուք Երուսաղէմէն ու երկար խորհեցաւ բնակավայրի մը ընտրութեան մասին :

Իր ունեցած հարստութեամբ կրնար ձեռք բերել այն ամէն պերճանքն ու բարօրութիւնը, որոնք իր պոյութեան անհրաժեշտ էին : Իսկ կլատիան հաւանութեան մասին վայրկեան մը իսկ չը տարակուսեցաւ վասն զի լաւ կը ճանչնար անոր սիրոյն մեծութիւնը :

Կլատիան քիչ առնէն պիտի պարզինքը միջիթարելու և անոր ներշնչելու այն ուժը և անգործութիւնը՝ որոնց ինք այնքան պէտք ունէր :

Իր կանխաստեութիւնները ճիշդ էին. այդ անարկու մարդապանութեան քանի մը ժամ վերջը, երբ գիշերը տակաւին ծածկուած էր թանձր աղմուկով մը, սեւազգեստ

յացուցիչները արխալ—թափալ վազում են այդ մարդկային «գառապ» թուրքերի պետի Սուլթանի 25ամեակը փառաւոր կերպով սօսնելու լռեկեան նրան առեղով «Սուրբ կարուկ լիւնի կարմիր Սուլթան», կոտորիք ինչքան կուզես, չես տեսնում որ մենք մեզ գիծողներին միայն պատասխանում ենք : «ցաւում ենք», կոտորիք Սուլթան կոտորիք, միայն մեզ ոսկի տուր, հող չէ թող այդ ոսկին քողովելի արիւնով թրջված լինի, մեր ձեռքերը չեն զողայ. այդ արիւնը մենք յոյնիսկ չենք սրբի, թաց թաց գրպաններս կը դնենք, այնքան հոգար անուշ է :

Մենք յարգում ենք քեզ Սուլթան, որովհետեւ քու սիրուն երկրի երկիրքը արեան գոլորշուց կազմված մշուշով է պատած, իսկ ինքը երկիրը արեան լճակներով, ուր խեղդվում են քո բազմաթիւ հպատակները : Նրանց աղերսագրին աղաղակ-

կին մը, որուն գիծագծերը կը պահուէին երկար քողի մը տակ, իրեն մտեցաւ ու անոր անջնակ ծննդադրելով սկսաւ արտասուել հեծեծանօք:

Պիղատոս չէր համարձակեր անոր վշտին արտայայտութիւնը խանգարել: Երբ քիչ մը խաղաղեցաւ, նշուաւ մետաքսեայ եւ ոսկեզօծ գահաւորակի մը վրայ եւ գլուխը իր ամուսնոյն ուսին դրաւ մեղմիւ: Այն աստիճանի խօսիլ ուզեց, բայց կլաւտիան իր ճերմակ ու նուրբ մատներով փակեց անոր բերանը եւ ըսաւ. «Բառ մը իսկ մի՛ արտասաներ վերելիս, վասն զի այն խօսքերը զորս կուզես արտասանել, բնաւ չի պիտի մեղմացնեն այն սարսափելի ոճիւրդ որ քու անունովը կատարուեցաւ: Գիտեմ թէ որքան կը տանջուիս եւ զեռ պիտի տառապիս ապագային մէջ, ի պատիժ քու խուլութեանդ:

Կը սիրեմ քեզ, ու կուզեմ քեզ ազատել հոգեւոր տիրապետող իղծի խայթիւրէն, այժմէն իսկ թողունք այս երկիրը եւ երթանք օտարութեան մէջ փնտռել մեր հանգիստը եւ մտացումը: Եւ իրենց արցունքը համբոյրի մը մէջ իրարու խառնելով, վայրկեան մը կարծեցին վանել վիշաք որ իրենց հոգիները կը ճըմէր:

ՎԱՐԴԱՆՈՒՇ

(Շարունակելի)

ԲԷՔԻՆԻ ԹԱԼԱՆԸ

«Աւէսթ Միլիտար» լրագրի Զինաստանի թղթակիցը Բէքինի թալանի մասին թղթակցութիւն մը գրած է, ուր կը նկարագրէ եւրոպացիներու բռնած ընթացքը դէպի Զինները եւ անոնց երկիրը:

Թղթակիցը հետեւեալը կը հաղորդէ. երկու ամիս կըլլայ որ զաշնակից զօրքերը Բէքին մտած են. քաղաքը կենդանացաւ, փախած Զինները վերադարձան, խառնութիւնը կրկին բացուեցան: Օտար զօրքերու մէկ մասը կը հեռանայ. բայց հոս գտնուող օտարներու եռանդը դէպի թալանը չը պակսեցաւ: Թալանը միակ նիւթն է խօսակցութեան

ամէն տեղ, տուներու եւ իսնու թմբու մէջ:

Ճաշերէն ետքը բոլոր օտարները կերթան իրենց դեպքանատունները թալանած իրերու ածուրդին. իսկ երեկոնները յաճախ կը կազմակերպեն փոքրիկ «արշաւանք» ներ Բէքինի շրջանակները թալանի տալու: Մէկ խօսքով առաւօտէն մինչեւ երեկոյ, երեկոյէն մինչեւ առաւօտ «թալան» է:

Անոնք որոնք ամիս մը առաջ ամենաշեմ կերպով կը դատապարտէին առանկ գործեր, այսօր իրենք կատարաբար անձնաւեր եղած են:

Թալանը սկսան զինուորները, իսկ հիմա ոչ միայն սպաները եւ պարզ քաղաքացիները այլ եւ հոգեւոր քարոզիչները ու զեպանակիւն բարձր պաշտօնեաները կը շարունակեն զայն:

Թալանի հրապուրանքին դիմադրողներու թիւը խիստ սահմանափակ է: Եւ ատոնք այլ զօհ չեն իրենց իղծի ձայնին ակնաջկախած ըլլալուն համար:

Ճիշդ է որ քանի մը մեծ պետութիւններ պաշտօնապէս դատապարտեցին թալանի սովորութիւնը եւ պատուիրեցին Զիններէն առանց ստակի բան մը չը վերցնել. սակայն այդ տեսակ հրաման մը դիւրին է զանց ընել եւ գործնականապէս ոչ մէկ ազդեցութիւն ունի:

Ահա թէ ինչպէս կը գործադրեն այդ հրամանը:

Երբ զինուոր մը կամ թէ սպայ մը շինացիի մը քով կը գտնայ իր փափագած իրը, Զինացիին կառաջարկէ գրամ մը եւ ստիպողաբար կը համոզէ ստորագրել կանխաւ պատրաստուած ստացագիրը. շինացիին կը հնազանդի ո՛չ անոր համար որ իրեն հաճոյալի է, այլ որովհետեւ փորձով համոզուած է թէ՛ անհամեմատաբար գերադասելի է հնազանդիլ:

Քանի մը օր առաջ, հանրածանօթ սպայ մը իր զօրաբաժինը

վերադառնալով հետը բերած էր մեծածաւալ եւ սքանչելի նրբութեամբ ստեղծագործուած պատառ մը, եւ երկու մուշտակներու թանկագին քարեր:

Սպան այդ ամէնուն համար վճարած էր 25 սանթիմ:

Ընկերները սպային կը հարցնեն.

— Զարմանալի է, ի՞նչպէս ըրիր:

— Ինչպէս ըրի՞, այդ դժուար չէ. 25 սանթիմ տուի սիրով, յայտարարեցի անոր թէ, եթէ ինք զինը պակաս կը գտնայ, պիտի ծանօթանայ իմ ատրճանակիս փողին հետ:

Այս տեսակ գործերու տոկալու համար, պէտք է որ թալան մեծ յառաջադիմութիւն ըրած ըլլայ նոյնիսկ բարձրաստիճան պաշտօնեաներու մէջ, եւ իսկապէս այդպէս ալ է:

Գեպանատունէն բէն միոյն քարտուղարը քանի մը անգամ իր բարեկամները եւ ծանօթները ներս թողուցած է կայսերական պալատէն. որպէս զի անոնք ուզածնուն շափ թալանէն. ուրիշ պաշտօնէի մը առեր իր թանկագին իրերով. հրապատարանի պաշտօնեայ մը բաց է ի բաց մեծ փոխառութիւններ ըրած է, որպէս զի զինուորներէն գնէ անոնց գիւղերէն թալանած իրերը իրենց արժէքի տասներորդ մասը վճարելով:

Պաշտօնեան այդ իրերը կը ծախէ լաւ գներով եւ հիմա կը կարծեն թէ ան արգէն շահած է 125,000 ֆրանք:

Թալանով միայն արբւր չեն որ կը զբաղուին. կիները նոյնպէս եռանդով նոյնը կը ընեն:

Նոյնիսկ առաջին օրինակը տուողները կիները եղան. կը պատմեն թէ օտար զօրքերու Բէքին մտնելէն դժու հինգ վայրկեան հազուանցած՝ երեք տիկիներն աճապարանքով թողուցին դեպքանատուները եւ մրցելով վազեցին յայտնի խանութ մը՝ որ կը գտնուէր դեպքանա-

տանց փողոցին վրայ եւ ուր իրենք յաճախած էին խաղաղ ժամանակներ եւ գիտէին թէ լի է մետաքսեղէն կերպաներով:

Տասը վայրկեան յետոյ ասոնք վերադարձան յաղթական ժպիտներն շրթերուն վրայ եւ ծօցերնին լեցուն հին արժէքաւոր ստեղծագործութիւններով եւ շալերով:

Քաղաքային պաշտօնեաներ, զինուորներ, զօրականներ, այրեր, կիներ, երեխաներ, ամէն գասակարգէ եւ գիրքէ, շնչին բացառութիւնով մը, այս բոլոր պէիս զբաղած են կողոպուտով Բէքինի մէջ:

Ոչ մէկ շինացի խնայուած է, «թէ Պօքսէր եւ թէ Քրիստոնեայ» երբ ան արժէքաւոր իր մը ունի: Միայն կայսերական պալատի հարստութիւնը գրէթէ անձեռնմխելի մնացած է, որովհետեւ անոնք խիստ հսկողութեան տակ կը գտնուին: Բացի անոնցմէ չը կայ շինական սեփականութիւն մը որ գրաւուած, յափշտակուած, թալանուած կամ թէ «գնուած» չըլլայ վերը յիշած ձեւով:

Ոչինչ մնացած է անձեռնմխելի աբեւտեան ազդերու ներկայացուցիչներու, բարձր աստիճանի քաղաքակրթիչ ազդերու ճանկերէն, որոնք եկած են ոչ Զինաստանին տիրապետելու եւ ոչ սեփականութիւնը եւ կեանքը շնջելու, այլ յանուն քաղաքակրթութեան եւ մարդասիրական շահերու:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Պօլսոյ Ուսումնական Խորհուրդին անցեալ ուրբաթ օրուան նիստին մէջ որոշուեց են ուսուցչական դասախօսութեան համար սեզի ունենալիք կարեւոր կարգադրութիւնները:

Այս տարի մեթոդներէ աւելի կարեւորութիւն պիտի տրուի նիւթերու եւ այս կերպով ուսուցիչները դիւրութիւն պիտի ունենան զարգանալու իրենց դա-

ները մեզ է հասնում օգնութիւն խնդրելով, բայց մենք նրանց պատասխանում ենք— «ցաւակցում ենք» մեզ... Բայց ինչ կարող էնք անել. թուրք կատարում է իր կրօնքի պահանջը, իր մարգարէի հրամանը Մենք միայն ցաւում ենք մեզ, դիմացէք եւ մենք կը հիմանք ձեր կորովով»:

Սուլթանը լուծ է լուսաւոր մարդկութեան ներկայացուցիչներին այդ խօսքերը եւ շոյում իր խալիֆայական մօրուքը. նա փոստում է սր այնքան քիչ հայ եւ ուրիշ քրիստոնեաներ է կոտորել...:

Եւրոպայի ամբողջ կէտում, մի անպիսի գաղան իր հսկայական թաթերը փռած, ճանկերը խրել է բազմացել, բազմասանջ միլիոնաւոր ժողովրդի սրտի մէջ եւ պատաս պա-

տա է անում. հայ, Ֆինն, վրացի, թաթար, ու պարսիկ, լեհ եւ ռուս թրպիտում են այդ ճանկերի մէջ եւ հազիւ խեղդուկ ձայնով օգնութիւն մրմնջում. ու լուսաւոր մարդկութիւնը այդ զոհերի խեղդուկ շշուշը լսելով՝ յայտարարում է — «ցաւում ենք, բայց ի՞նչ կարող ենք անել, կըր ձեզ տանջում է խաղաղասէր ու համաշխարհային խաղաղութեան քարոզիչ եւ պաշտպան կայսրը:

Համբերեցէք, գիտացէք, կամաց կամաց խեղդամահ եղէք. լուսաւոր մարդկութիւնը կսքանչանայ ձեզնով»:

Ամբողջ աշխարհի վրայ, հսրիւրաւոր միլիոններով զեղին, կարմիր, սպիտակ ու սև մարդկային ցեղի աշխատաւոր դասակարգը իր կանանցով ու երախտներով, շարունակ աշխատող, շարունակ անօթի, մերկ

տղէտ ու խաւարի մէջ ընկղմված, իր անտանելի վիճակին դարման է պահանջում ամբողջ աշխարհը իր յուսահատական ճիշով թնդացնելով, եւ լուսաւորեալ մարդկութիւնը կրկին իր սոլորական հոգեկան հանգստութիւնը պահպանելով պատասխանում է:

— Աշխատեցէք, շարչարվեցէք, աշխարհը ձեր ձեռքերի եւ ուժի արդիւնքով հարստացրէք, միայն դուք միշտ դիմացէք ցրտին, սովին, հիւսանդութեան, եւ մենք ձեր շարչատուութեան արդիւնքը վայելելով միայն կափտասանք եւ կը ցաւենք ձեր վիճակի վրա...:

Օ՛ր ճշմարիտ մարդի ջգերին է զիպղում, այդ ցուրտ «ցաւում ենք» խօսքը որ շարունակ արտասանվում

է թէ անհատական եւ թէ հանրային վշտերի հանգէպ:

Անհատները եւ ազգերը պէտք է խուսափեն այդ խօսքը լսելուց. ամեն մի անհատ եւ ժողովուրդ պէտք է ջանայ որ այդ «ցաւում ենք» լսելուն չայժամանայ, մանաւանդ եթէ նրան չէ հետեւում դրական օգնութիւնը, զբերախտութիւնը ամոքելու համար, ինչպէս եւ յաճախ լինում է:

Գծաբխտ թէ անհատ եւ թէ ժողովուրդ պէտք է հասկնան որ «ցաւում ենք» խօսքը մեծ մասամբ կամ թ յլ, բարի եւ օգնելու անկարող մարդի հառաչանքն է զծախտութեան հանգէպ, կամ քարասիրտ ու ոսկեպաշտ դիպլոմատի հեղնութիւնը...:

ՎԱՐԴՕ

—)(—

սախտած առարկաներուն մէջ : Այս տարի դարձեալ 40 գասախտութիւն պիտի ըլլայ և Ռուսմանական Խորհրդոյ անդամներէն Հրանտ Ասատուր, Գուրգէն, Կուրտիկեան և Կարապետեան իրենց մասնագիտութեանց վերաբերեալ ճիշդութեամբ մասին պիտի խօսին : Գասախտանքի մէջ պիտի զբաղուին նաև նոր գէ. Լ. Բ. Բ. բայց ասոնց վերջնական անստիճանը և գասախտութեան առարկաներու որոշումը վարչութեան վաւերացման պիտի ենթարկուի :

— Բաղէշի որբանոցի հոգաբարձութիւնը իր համարատուութիւնը զրկած է պատրիարքին որմէ կը քաղենք հետեւեալը :

Յուլիոսի վերջերը տեղի ունեցած են քննութիւնները, որոնց միջոցին որբանոցի սաները գոհացուցիչ պաշար ցոյց տուած են աւանդուած առարկաներէն, որոնք են. հայերէն, թուրքերէն, ֆրանսերէն, ընդհ. պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօնք, բնագիտութիւն և այլն :

— Որբանոցի գրեւորական միջոցը բոլորովին սպառուած է և ներկայ շրջանին համար դասագրքերու պէտքը շատ զգալի դարձած է. ասոր համար պատրիարքէն գոհացում կը խնդրուի :

Որբանոցի շորտերը կարգը աւելնալու համար երրորդ պաշտօննայի մը պէտքը ունի :

Որբանոցի սաներու թիւը 51 է : Ասոնցմէ ութը թոշակաւոր են, որոնց ծնողքը տարեկան հինգ տակ կը վճարեն, հոգալով նաև անկողնոյ և հանգերձեղէնի ծախքերը : Սաներէն 34ը քաղաքացի են, 11ը քաղաքին մտակալ և հեռաւոր գիւղերէն, մնացածները ուրիշ տեղերէ :

Կը յուսացուի թէ այս տարի թոշակաւորներու թիւը 12ի բարձրանայ :

Որբանոցի մէջ արհեստ ալ կը սորուին :

— Պօլսէն կը հաղորդեն թէ Գոտաստանական Խորհուրդի աշխարհական անդամները իրենց ատենապետին հետ միահամուռ գործէն քաշուած են իրենց արժանապատուութեան համար վերաւորիչ հանգամանք ունեցող խնդրի մը համար :

— Ստեփան փաշայի յանձնարարութեամբ Աղզ. Հիւանդանոցի ներքին կանոնագիրը փաշան արդէն պատրաստած է և ժողովոյն ներկայացուցեր է :

Ժողովը լսելով Ստեփան փաշայի տեղեկագիրը և անոր բացատրութիւնները, ծրագիրը ընդունել է, և իր շնորհակալութիւնը յայտնել է Հիւանդանոցի հոգաբարձութեան ու փաշային :

— Խառն ժողովի մէջ կարգացուեր է կաթողիկոսին զրկած նամակը որուն, մէջ էջմիածնայ գործերու մասին տեղեկութիւններ կան :

— Սօֆիայէն Պուլիարիոյ այցելու հովիւ Պաղճեան վարդապետին դէմ 115 ստորագրութիւնով ըսողք մը զրկուած է պատրիարքին այցելու հովիւին Սօֆիայի թաղ. Խորհուրդը լուծելուն և առժամեայ մարմին մը կազմելուն համար :

Այդ բնորոշ կը խնդրեն կամ նախկին ընտրովի թաղ. Խորհուրդը վերահաստատուի և կամ թէ նոր ընտրութիւն ըլլայ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Անգլիական հինգ զբահատորներ անցեալները Բաքէնտէրունի նաւահանգիստը հասեր են, ուր հինգ շարժ պիտի մնան :

— Հնդկաստանի իսլամները 150,000 ռուբլի հանգանակութեան տոմս ուղեր են Հիւսիսային Երկաթուղիի շինութեան ծախքին մասնակցելու համար :

— Գերմանական թնդանութեան կիր նաև մը շուտով նաւահանգիստ պիտի հասնի :

— Անցեալ շաբաթ իրիկուն Պոլիս սարսափելի փոթորիկ եղած է : Քաղաքին մէջ տուններ փլած են, իսկ ծովի վրայ ալ նաւեր ընկղմուած են :

— Կովկասէն 30 000 շէշէն իսլամ աղբարագիր տուած են Սուլթանին թուրքիա գաղթելու :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

— Լօրտ Գիշնէր հետեւեալ ծրագիրը պատրաստած է Պօլսէնտուն դէմ. փոքրաթիւ գիւրաշարժ հեծելազոր վաշտեր պիտի կազմէ պօլսէնտուն դէմ մաքառելու համար, իսկ հետեւակները պիտի պաշտպանեն հայորդակացութեանց ճամբաները : Քիշնէրի կարծիքով այս գործը շատ դժուարին պիտի ըլլայ և կարելի է քանի մը տարի տեւէ :

— Քրիւկէր նոյ. 21ի կէս գիշերին Գիշնէր հասած է և համակրալից ընդունելութիւն գտեր է : Նոյն օրը Վիլհէմ կոյսորը ծանուցեր է որ կը ցաւի գիւղքը հիմա ընդունել չի կրնալուն համար, արդէն ճշգրտած տրամադրութիւններու հետեւանքով : Քրիւկէր Հոլանտա պիտի մեկնի երկրի :

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Ս Ա Ն

Պարսից Շահին Պոլիս ուղևորութիւնը կերեւայ թէ շատ դժուարացել է արդիւնք մը ունեցած չէ երկու պետութեանց միջեւ լաւ յարաբերութիւններ ստեղծելու տեսակէտով : Արդէն երկուսէք բաղխուանք ու դժկամակութիւններ երեւան եկած էին մէկ քանի առկալ խնդիրներու կարգադրութեան համար : Հիմակ ալ Շահը կը ջանայ Պարսկաստան

քաշել հայ ժողովրդին մէկ մասը : Թէ հրանէն հեռագիր մը կը հաստատէ թէ պարսից արքան հրովարտակով մը թոյլատուութիւն կուտայ պարսկահաստակ հայերուն վարժարաններ բանալ իր երկրին մէջ, թերթեր հրատարակել, վաճառականական ընկերութիւններ կազմակերպել, առանց կառավարական մասնաւոր արտօնութիւն խնդրելու և գեռուրիչ խել մը արտօնութիւններ, ճիշդ այն բաներու մասին՝ զորս թուրքիա կը մտածէ շնորհել հայոց :

Եթէ մէկ կողմէն պէտք է շնորհարել Շահին ազատամտութիւնը, որուն ապացոյցը կուտայ այս առթիւ, պէտք է մյուս կողմէ միանգամայն խոստովանել թէ, այս վեհանձնութեան գլխաւոր շարժառիթը թուրքիոյ անհաճոյ ըլլալն ու դժգոհ հայ տարրը Պարսկաստան քաշելն է : Բայց պարսկական իշխանութիւնը արդեօք պիտի պահէ՞ այդ առանձնաշնորհումները, երբ անգամ մը Հայերը Պարսկաստան հաստատուին, և կրկին չի՞ պիտի վերագառնայ այսօրուան գործադրուած ըէժիմին :

Ապահովաբար, Շահին այս հրովարտակը երկու դրացի պետութեանց միջեւ միջադէպներու առթիւ պիտի տայ, որոնք մեզի պիտի կարողանան յայտնել իրենց իսկական տրամադրութիւնները :

Ֆ Ր Ա Ն Ս Ա

Պրանսական կառավարութեան պաշտօնաթերթը կը հրատարակէ հրամանագիր մը թէ Պրանսայի և պայմանագիր պետութեանց միջեւ պիտի գործադրուին Լահէի խաղաղութեան դեռ պանախորհրդին որոշումները և պայմանագրութիւնները : Նոյն պաշտօնաթերթը կը ծանուցանէ նաև թէ Լէօն Պուռժուա, Լապուլէյ, Ռեճո ու Տէդուռէլ Պրանսական միայուն պատուիրակ կարգուած են Լահէի իրաւարարական դատարանին համար :

Լրագիրները կը շեշտեն կարեւորութիւնը այդ հրատարակութեան որ այն միջոցին կը պատահի, երբ Քրիւկէր տէրութեանց միջամտութիւնը կը խնդրէ ինչպիսիս իրաւարարութեան մը Անգլիոյ և Թրանսիլիվանիան համար :

Չ Ի Ն Ա Ս Ս Ա Ն

Վիէնայի գիւտագիտական ակադեմիան մէջ կը կատարուին թէ Պրանսայի դէպքերը նորէն ծանր հանգամանք մը պիտի ստանան : Սակայն վտահոտութիւններ չընդունուցնելու միտքով տէրութիւնները հիմակուրէն կը դուշակեն անհամաձայնութեան ծանր հետեւանքները :

Չինու խնդրին երկարելուն աւմենէն մեծ վտանգը Բէքինի բա-

նակցութեան ընդհատուելուն մէջ չէ՞ այլ կը վստացուի թէ աշխարհի սեւեմասին մէջ երկու տէրութիւններուն միջեւ անհամաձայնութիւն կը ծագի և այդ պատճառաւ կը խոնգարուի պետութեանց ներքաշնակութիւնը : Ասոր համար ալ ընդհանուր փափագ մը կայ խնդիրը շուտով կարգադրել :

— Նանքինի մէջ ստոյգ աղբիւրներէ կիմացուի թէ բոլոր փոխարքաները և կառավարիչները հրաման ստացեր են ծովեզերքները և դեռեզերքները պաշտպանելու :

— Բրիտանական կառուածներու մէջ անգլիական և ֆրանսական զինուորներու միջեւ ծանր շփոթութիւններ պատահած են :

Մինչեւ որ կարգադրութիւն մը ըլլայ, անգլիական ու ֆրանսական զինուորները իրենց կառուածներու մէջ պիտի մնան :

— Հինգ հարիւր շինական հեծելազորք ճամբայ ելած են թուան իշխանը ձերբակալելու :

— Իտալական թերթի մը Բէքինի թղթակիցը հեռագրած է իր ունեցած տեսակցութեանը մասին Լիւզոնկ-Չանկի հետ :

Վերջինս յայտարարած է որ Չինաստան անկարող է վճարելու պետութեանց պահանջած պատերազմական տուգանքը : Եթէ Չինաստան պետութեանց Քօնթրոլին տակ մաքսերու հասոյթները երաշխաւորութիւն տալով մէկուկէս միլիոն ֆր. փոխառութիւն մը կնքէ, ատիկայ պիտի նշանակէ Չինաստանի անկախութեան վերջաւորութիւնը :

— Թիէնէի առժամեայ կառավարութիւնը յայտարարութիւնով մը մահու պատիժի սպառնալիքով կարգի է համախմբումները քաղաքին ու արուարձաններու մէջ :

— Ըստ շինական լուրերու Թիէնէի մէջ մտահոգութիւն կը տիրէ որովհետեւ այօքսէրներ և շինական զինուորներ գաղտնի հոն կը վերագառնան : Կը վստացուի թէ ձմեռը երբ նաւահանգիստը փակուի նորէն շփոթութիւններ կը ծագին :

— Հիւսիսային Չինաստանի մէջ գաշակից պետութեանց զինուորներու թիւը մտաւորապէս այս է. 25000 Գերմանացի, 15000 Պրանսացի, 15000 Ճարոնացի, 7500 Անգլիացի (առանց հաշուելու Շանկայի և Հոնկոնգի զօրքերը), 3000 Ռուս, առանց Մանչուրիա գտնուածներուն, 2100 Իտալացի, 1800 Ամերիկացի և 300 Աւստրիական. ընդամենը 69700 :

— Կը կարծուի թէ Ռուսիա մտադիր է իր զօրքերու մնացորդը Չինաստանէն ետ քաշել և Շան-Քուանի և Թիէնէի գիծը Գերմանիոյ յանձնել պայմանաւոր ան ալ Անգլիոյ տայ :